

# ԽԱՐՄԻԿԱ



Գինն է 10 կ. Գառադնեքում 12 կ. 1911, Շաքաթ, ՓԵՏՐՈՒԱՐԻ 5 -ին. Թիֆլիս. № 6.

Դ Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ը Զ Ի Ն Ա Ս Տ Ա Ն Ո Ի Ս



ԱՆՏ.Տ.ԵՄԻՍՈՎԱ Որ մէկիցը ազատեմ իմ օճիցը—մի կողմից հարեամեները, մ'իս կողմից սահմանադրութեան, պահանջը, իսկ մեծեղու է ժամտահատու:

Բ Ա Յ Ի Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

1911 թ.

VI

Տարի

# ՄԱՔԱԲԱԿ

VI

Տարի

Երգիծարանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի  
ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆՆԱՓՄԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և զրկիչ, անկեղծ և կեղծա-  
ւոր գործիչ-կործիչների և խայտառակիչների:

Ա.Սիբամիս քեր բոլոր բնակիչների համար

«ԽԱՔԱԲԱԿ» շաբաթին ծիծաղեցնում է, շաբաթին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ  
ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քեֆերդ ուզի:  
Հասցէն՝ Тифлисть Музейный пер., Редакция „ХАТАБАЛА“:

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»  
Խմբագիր-նրատարակող՝ Ա.Ս. ԵՐԻՅԵԱՆ



«ԽԱՔԱԲԱԿ»

Տարեկան	3 ռ. 50 կ.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

«ԽԱՔԱԲԱԿ»-ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՆԱՆԻԱԿ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ռ.

Տարեկան	12 ռ.
Կէս տարին	6 ռ.
Երեք ամիսը	3 ռ. 50 կ.
Մէկ ամիսը	1 ռ. 20 կ.

100 տարով բաժանորդագրել  
գանկացողին 75° զեղջ  
Ձրի կարգացողներին պէտք է նկարենք  
Գ Լ Խ Ի Վ Կ Ե Ր :



### ՄԱՐԻՆՆԵՐՈՒ ԺՍՄՓԻՆ \*

Էս մաշինէն էլ լաւ մոգոնեցին այ, քաղքեմէն Նաւթուլու հետախ հասանք, կօսիս, վուչինչ, տօ վուրդի թամաշա էի անում փանջարիցը էլի քաղաքն էի տեսնում, միր պիտլած, միր սիրուն, միր պարուն Տիպլիզ քաղաքը:

Ետքը գիզեհամ սրա թաւուր էլ ուրիշ տիղ կայ էնգիզունիում:

Վա՛, քաղքումը մեռնիլը լաւ է, քանց թէ ուրիշ տիղ ապրիլը:

Նաւթուլուսեմէն մինչկի Բաքու էլէ խելիմ ճամփայ է էլի, էդու համա էլ վագոնում լարչիքս հանեցի, գլխատակիս դրի ու պառկեցի... Էրագներ տեսնելու, Բաքում միլիօնչիկ դառնալու հետքով:

Ու տեսնում էի, վուր նաւթը վունց Բոլի Ղաբը ապրիլ-մայիս ամսին՝ գալիս է. իս էլ կուղքին կազնած իմ, մէ կուր թուրուխիքը, մէ կուռն էլ բոչկէքը լքցնում ին ու տանում. իս ձէն չիմ հանում, Ասաու աւած է, ասում իմ, թող տանին, քուրխաթը պահին, հալբաթտա էնդգամ կուսնայ վուր՝ մինք էլ խէրլինք:

Տեսնում իմ վուր աղչկէքը, հարսնիլը կժերով գալիս ին, գուզին նաւթ վերցնին ու իմ ուպրաւէչիէքը չին թողնում, ասում իմ, ձէն մի տաք, խիղճ խալիս ին, թող վերցնին, ու հետախ էլ բուրբուլ վառում ին, վուր էլ գիշերներ չի ըլում, դիփ ճիակօկօնէք (խարոյկներ) ունին վառած:

Տեսնում իմ միլիօնիլը. սէլիբով, պոչոսկաներով, ֆուրգոններով օսկիքը գալիս է ու գալիս, իս էլ միթով վուչինչ՝ իսկի բանի տիղ էլ չիմ գնում, վունց փուղ, վունց հուղ...

Լաւ-լաւ էրագներ էի տեսնում. իս էլ խան աւտոմոթիլով, խան ֆայտոնով, խան կոնկով դէս ու դէն էի վագվզում. գուրձքիլը կարքագրում ու հիաս էլ էնդրամ խալիլը.

Էստունք էի տեսնում, վուր՝ մէկէլինչ տեսնիմ, «Սաթարալի» գրաշարնեբուն էլ տեսայ. — պարուն խմբագիր նութ աւէք, կօսէ, — իճաներս մօղ էլ լան, տօ ձիւ ձիւ ձեռիցը ազատւեցայ, միլիօնչիկ դառայ, էլի ինձմէն ձեռը չիք վիկալնում, ասի. — վա՛, կօսէ, մինք խօմ չինք կանայ պարտին մուխանաթուլին անի, կօսէ, միր գըլխիցը ձեռը կու վիկալնիք ու քիմէն կի չինք բաժանուի, կօսէ, նութ սու, վուր «Սաթարալէն» շարի, կօսէ:

Էստուրքումն էի, գուզէի մէ լաւ ալիդուլի տամ ու շափալաք հենց վուր տանում էի վուր մէ լաւ գալուսկի ուտեցնիմ, մէկ էլ տեսնիմ՝ թիլէթ դաւայ, է՛յ ստարիկ, կօսէ, գաշիմ քիօշ, կօսէ, վիկացայ տեսնիմ՝ կոնդուխտորները գլխիս կազնիլ ին, թիլէթ ին ուզում:

— Վաշ կուղա իգեօտ, կօսէ:

— Ես միլիօնչիկ Գասպար Կալաուրով, Բաքու պալաքեօմ, նաւթ կուպիմ, ասի:

— Ա. գդէ վաշ միլիօնի, կօսէ, ստարիկ:

— Բուղիթ, ասի, վաօ Էստ, ասի, նէմուշիօ պոդաժիլի, ասի:

— Բիլէթ Էստ, կօսէ:

— Բաշպորտ, Էստ, ասի, մաշ, բէդ բաշպորտ նամեսաթիկ նէթիվիտ, ասի, բաս Էս նի շալաւէկ, ասի:

— Նի բաշպորտ, ա՛ թիլէթ նա պրօեգդ, կօսէ:

— Տակօյ վէշչի նիգնայիմ, ասի, Բա-

քու իղիօմ, ասի, ջէր վագմի, պատմ դենգի դամ, ասի, էգէբա նագորդէ կալօս պրոտեստոս ասի, իժում կակ Էս պօյու, ասի:

— Վի տոթէ պրափա գօվորիշ, ասմէ, համա ունաս տակոյ գակոն, կօսէ:

— Շարաֆ գապրօտիշ, կօսէ:

— Վա՛, Էս նէ ըէգախուր, Էս նէ ժուրնալիսա, գաշիմ շարաֆ, Էս շալաւէկ միլիօնչիկ, գաշիմ հը՝ շարաֆ, ասի:

— Տակօյ գակոն, կօսէ, Բաքու դըփոնոյ գաշ, կօսէ:

— Կակ խօշիշ ասի, համա պերիօդ նի դամ ասի, ջէր վագմի, Բագո՛ւ կազգա վիգիմ՝ պոտոմ դամ, ասի:

— Սօրօշ, կօսէ, ու ինչ վուր բան վնթվնթացին. իժում գնացին. խէլիմ ժուղ մնացի էնէնց. էրեպս խաշ հանեցի, փուղս վրէս էր:

Էլի գնացիք. մաշինէն էլ մէ թէ կազնում էր ստանցիէքում, մէ հետախ էլ վագում էր՝ վուր քու հաւանածը. վա՛, կու վագէք, մաշ ինչ, իմ թաւուր միլիօնչիկ էր տանում սէ:


Էլի քնեցի, էլի էրագներ տեսայ, էլի բանիլ-մաներ, հետախ անիլ ու ծով ու քաղաքներ, վուր ջէր իմ աչքովը չէի տեսի:

Էքսի առուտեսան ձիւ ձիւ հասանք, — Վաշ գաւայ գէնգի, կօսէ, տեպիլ Բաքու պրիշօլ, կօսէ:

Տէի մէ թուամն, հետախ պուլս աւին, վուր քու հաւանածը. միր վարթապիտները վուր էտէնց գուլս տան իրենց մինձաուրներուն՝ միր կաթղիօններուն — սրանք իսկի չին մեռնի:

Վագվումը վուր դիվիլ էկայ, խելիմ խալիս կէր, Էնդգամ նասիլչիկ, շանդար, գապարի ֆայտուն կէր, վուր

\*) Տես Մաթ. № 5.



արմցիլ էի, ինչ լաւ ին պատիւ տալի  
ասի ինձ. գաստնիցէքի բջիւրն էլ վուր  
սիրով մեծբում էի՞ն:

Նստեցի մէ ֆայտուն, ասի՝ վագմի,  
կակոյ նիրուդ խորոշի քարան-  
պա. դոչադ փայտունչիկը հետտի ջալդ  
վագեցրեց, հետտի թէզ արդ հասցրից  
վուր...

Հիմի Բագուում իմը, այ քարոք. մէ  
քիչ վուր դնջացայ, մէ քիչ էլ փուրիս  
դարդը քաշեցի, մէջքիս ձեռք տւի...  
տեհայ փուղիրս էլի էնդի ին՝ ախալու-  
խիս մէջքին կապած. ասի, ես էլ էստի  
իմ ու էքես խաչ հանելով դուրս էկայ  
քուչա, վուր դնամ ու տեհնիմ իմ ա-  
ուուուուրի բանը:

Քուչոււմը մարդ չկէր, հետտի ան-  
դէր քամի էր, վուր մարթիքը բւբու-  
լի թաւուր թոչկոտում էին:

Տեհայ մէ գորոգսովոյ.

—Վաշի բլոդորոգեա, ասի, բզգես  
խորոշի նաւթի փոնտան գդէ, ասի,  
խաչիմ կուպիմ, ասի:

—Վուչաստկէ, կօսէ, իդի, տամ սկա-  
ժուտ, կօսէ:

—Գիժա, ասի, գաչիմ ուչաստոկ—  
ու հեռացայ, տեհա մէ գագէթչիկ  
բզաւում էր՝ «Սաթաբալա», «Սաթա-  
բալա», վա էստի էլ «Սաթաբալա» սի-  
սի, սօ գանա Բաքուումն էլ «Սաթա-  
բալա», ին ունեցի, ասի. կանչեցի,  
հարցրի էդ ինչ «Սաթանալա» է, ասի:

—Ինչ «Սաթաբալա» կուլի, կօսէ,  
«Սաթաբալա» է էլի:

—Ֆիէ:

—«Սաթաբալէն» խօ քաղքումն է,  
ասի:

—Վա, քաղքումը վուր կայ էստի  
կի չի՞ ըլի, կօսէ,—քանի հատ գուզիս,  
կօսէ:

—Մէ դուժին. քանի հատ—ասի, հա-  
մա դուն ինձ էն ասն, ասի—Մանթաշովի  
նաւթի օրմօէքը վուրդի է. ասի, գու-  
զիմ առնի, ճամփա շանց տու, քիզ էլ  
մէ բան փէշքէշ կօնիմ, ասի:

—Վա, պարուն, հետտի լաւ նաւթ  
առնիլ տամ, վուր դուն էլ. ասիս թէ  
Բալլէի ան Բրոկարի դուբի է, կօսէ,  
ու գնացինք:

Աչքիրս բան չին տեհնում, քամին  
գոռ է տալի—էս բաքեցիք էլ խիւբ  
ին արի էլի, հէր օրնաձնիւրը, ուզում  
էին քաղաք շինի, մէ քիչ միւր քաղ-  
քից մօտիկ կու շինէին ու համ էլ լաւ  
արդ. թէ չէ էս ինչ է, քամին աչ-  
քիւրը քոռացնում է, արա էստի մի-  
լիօնիւրը ինչ կօնիմ, թէկի պտեմ քո-  
ւանայ. չէ, չէ, չիմ ուզի, աչքի լուսը  
ուփրօ լաւ է, համա չէ, ինչ իմ շաա-  
պում, էգէբա խանդիսխան քոռութիւնն  
էլ լաւ բան է:

Գնացինք, գնացինք, դէս նրնգանք,  
դէն նրնգանք, դուս էկանք մի ինչ վուր  
արդ, սա ծով է, կօսէ:

—Տօ, գիժ ասի, ծով է թէ մով, իս  
ինչ կօնիմ ասի, կումիսի մօզ պակաս  
ծով կայ, ասի. ինձ նաւթի օրմօէքը  
ան Մանթաշովի կանտորը շանց տու  
ասի:

—էս սնաթիս շանց կու տամ, կօսէ,  
ու գնացինք, գնացինք, խելիմ ժուզ  
թրե էկանք, խելիմ էլ մրսեցինք, մէկէլ  
տեհնիս աչքիդ տուա՞լ վուրդանց վուր-  
դի Մանթաշովի կասիրին ուստ էկայ  
—պարուն Սասիփոուն Չերքիդովին, հը,  
տսեց—պարուն Գասպար, էստի ինչ  
գուրձ ունիս, կօսէ:

—Վա հէր օրնաձ, լուկմա գաւարդէս  
ջամշի չաւարդէս, ասի, իմացիլ իմ  
Մանթաշովի նաւթի օրմօէքը ճախում  
էք Նօբէլին, բանց թէ նրան իք տալի՞,  
ինձ տաք, ասի, իս ուփրօ հայ լուսա-  
չորչական չիմ ասի, համ էլ ասկասէր:

—Վա, էդի էլ ինչ խուսք, կօսէ,  
համա թէ դուրթ իս հրամանք անում,  
մտի կանտորը, էնդի խօսինք, կօսէ:

—Ի՞նչի չէ, ասի, համա թէ էժան  
կուլի կաննիմ, քիզ էլ մէ բան կի  
նրնգնի ասի, համ էլ տեղիցդ չինք  
շարժի ասի, ու գնացինք:

(էլի կուլի)

Վասպար Կալասուզով  
Խարաբալա ամեհայն Ետուց

ԷՅՆՆ-ՄԷՅՆ

Մէ աղէս բռնեցին,  
Սօրօ (որջ) ներս զրկեցին,  
Մէջը ծխով լցրեցին,  
Բանն էստեղ հասցրեցին,  
Որ խեղճին խեղճեցին,  
Վերջը դուս բերեցին,  
Մէ ծառից կախեցին,  
Ու կաշին քերթեցին,  
էն կաշին վերցրեցին,  
Վրէն աղ ածեցին,  
Լաւ էլ չորացրին,  
Սէլի վրայ դրեցին  
Ու Թիֆլիս զրկեցին:

Լցին-մէցին

Թիֆլիս որ բերեցին,  
Քուչով անցկացրեցին,  
Քուրքչիք նկատեցին,  
Կաշին հաւանեցին,  
էնդեղեկեթ գնեցին,  
Մէ մուշտակ կարեցին,  
Դրսեում կախեցին,  
էժան դին էլ դրեցին,  
Իրեց բան դրստեցին:

Լցին-մէցին

Կնեադները նկատեցին,  
Մուշտակն հաւանեցին,  
Շուտով բարիչեցին,

էն մուշտակը գնեցին,  
Մէ կնեազի հայցրեցին,  
Անուն Խիպօլօղ դրեցին,  
Քուչէն դուս բերեցին,  
Սալխին ցոյց տրեցին,  
Կնեազին գուլեցին,  
Հարուստ հոչակեցին:

Լցին-մէցին

Բիճ-բուճէք նկատեցին,  
Ղիժինա խիւցին,  
Սեղճին քարկոճեցին,  
Դէս-դէն քաշքեցին,  
Մուշտակը պատեցին,  
Կնեազին շաշացրեցին,  
Եւ վերջը սպանեցին,  
Փայտօնի մէջ դրեցին,  
Բալնիցա զրկեցին:  
Բալնիցա որ բերեցին,  
Շորիւրը հանեցին,  
Դոխտուրներ կանչեցին,  
Կրանք փորը կարեցին,  
Աղ-էսին փնտրեցին,  
Նորից փորը կարեցին,  
Քիտով լողացրեցին,  
Դագազի մէջ դրեցին,  
Ու տէրտէր կանչեցին:

Լցին-մէցին

Քելէխչիք հաւաքեցին,  
Դագազը վերցրեցին,  
Ժամը քաշ տրեցին,  
Ճասերն սկսեցին,  
Գլխները ցաւեցրեցին,  
Տիրացուք երգեցին,  
Հօքին էլ բռնեցին,  
Երուսաղէմ զրկեցին,  
Գովեստներ ասեցին,  
Սօջիվանք քաշաւուեցին,  
Գլխից դուրս տրեցին,  
Գերեզման որ դրեցին,  
Վրան հող ածեցին,  
Հեան էլ մի քար դրեցին,  
Նրա վրայ գրեցին,  
Այստեղ նրան թաղեցին:  
Որին որ սպանեցին,  
Ապրիլ ամսի վեցին:


Իխակ



ՂԱՆՅՅԻ ՄԱՐԳԱՐԻՑ ԲԱՐԵՆՔԻՐ

Նեոի լսողաց, Բայազետի պիանիցներին,  
խումարրազներին:

Բարե ձեզի, Նին եարան եղաշներ, հին  
զրկցներ, հին աղբրտիք, հին պիանիցներ,  
հին խումարրազներ...: Ճանչիք կը ինձի,  
թէ մտեհան իք էրի: Ախր վախճում ես ալ  
ձեզ զրկեցն էի, ձեզ գեղի մէջ խանութ  
ունէի, Սարընգիւրնց տունը կհնայի կը,  
ձեզ վարժատան հոգաբարձուների պղնձն-



ჭრუჭივ კლამ ხე მდებრქვა ზუგ ბაუბილი ზაძიარ აუჯაათიბე კაბხილი.

ბიბლია

ւր գալայէի կը: Իմ հարաններս էին բա-  
 ցոյնս կէկէլը, օր յառու թանոցների մէջ  
 չերվի գիւղի էր. մէ մալ զարաբազցի Գի-  
 պին: Աս յերկան յականջը ու կէկէլը մէ  
 զործիմ մէջ օրթաղ էին. էրկուսը մէ սի-  
 րուն ծաղիկիմ ունէին, սրով սրով հաս քա-  
 շէին կը. խաղցնէին կը: Ղարաբազցի Գի-  
 պին յամեն օր կուի հալվները հագած, չու-  
 նի զագինակը զօլթուզը, էրկու հասոմ ալ  
 յկամ կերթար վարժատուն, մահանայ բանմ  
 կէնէր, բաշայէր կը քիւֆուր քիաֆար,  
 անտից յետե ալ սուր ու գմբոց, զալմազ  
 յկիւ շօլի մէջ: Ան սնաթին խարբը հաս-  
 նիր կը հոգարաբձուներին, արթղ յամեն  
 կլասի զոան յառաջ մէ մէ զարավուլ զնէին  
 կը, օր վարժապետները զուս չգան ու յիրար  
 միս չուտեն: Զանմ ասիկ վարժատուն չէր,  
 ասիկ կուտան էր: Աս կուրեների թթիւը-  
 ս բը մէ խանուամ էր: Ախ, ինչ էնիմ, վե-  
 րե թքիմ յերեսս է, ներքե թքիմ միրուքս  
 է: Սաղ շատ պիտիմ, ձէն չուսիմ: Աս հե-  
 քեաթից էլ յերկանէ. քանի խառնիմ՝ գէշ  
 հաս գիւնի, լա է ծածկենք, ոստ էնինք:  
 Ասոնք մնան: Ես յուրիշ բան ունիմ:

Մնա պիտանիցներ, «Հորիզոն» գաղէթին  
 մէջ կարթացի, օր ձեր գեղի էրիկ մարդիկ  
 ջիրտան զային էղիբ, էղած չեղածը ծախին  
 արդի կուտան ու չուրամիշ գլին կը, հար-  
 րին ու յիրար ջարդին կը: Բիթուն գառի  
 ին պերվի նոմեր պիտանիցներ: Սաոնց փո-  
 րերը գառի է արագի պաղվալ: Ասիկ հլա  
 հէշ, ստուէս խմոցներ մեր քաղաքն ալ շատ  
 կան: Ասոնց հետ եօրայ էրթանք, թող խը-  
 մեն ասին կաթը ու ասլան գառնան ու  
 յիրար գզին, յիրար ջարդին. իրենց ձեռքով  
 իրենց հմար գերեզման փորին ու սող սող  
 մէջը մանին: Աղբար, աս բիթուն լա-  
 պիններն ուտէ: Հմը արի տես օր աս գա-  
 ղէթին մէջ գրեր էին թը բիթուն գառի  
 ին խումարբազ, ճանով խումար խաղան կը  
 ու կըին կը, խոսանոցը, բոստանը, յարտը,  
 հալվները: Զանմ, հլա ասոնք ալ հէշ: Աս  
 գաղէթին մէջ մէ պօջաւոր սուտմ ալ էին  
 գրիբ, հանի գիւլամ խումարի մէջ իրենց  
 կիկին ալ կրին կը, ջանմ իսիկ աւտայու-  
 ըմն է: Աս գաղէթ գրողը ես խմամ է էղիբ,  
 ես էրագի մէջ է տեսեր, ես թարս է քնիբ,  
 ես հանդիւշ է իմացիր: Ես աս մէ բանին  
 չիմ աւտայ: Ախր վեզ է տեսեր, օր էրիկ  
 մարդը իրեն կնիկը խումարի մէջ կըրի:  
 Ընդճ ազարկեազակ, տէր տիրական չունիս,  
 քիզի հայվի տեղ ին գրիբ, քեզի փողով  
 ծախին կը: Ամօթ առալէս էրիկ մարդուն:  
 Աս գաղէթ գրողը մէ բանմ մաէնան էր  
 էրիբ. չէր գրիբ թէ մէ կնիկը քանի մա-  
 նէթի տեղ խաղան կը, յեժան է, թանկ է,  
 սակոսայ ունի թէ չէ:

Ձեր հին գրկից Ղարաբազի Մարգար

\*\*\*

Ու մի օր ես էլ կիջնեմ գերեզման,  
 կըկորչեմ աննետ ինչպէս ծուծն օդում,  
 կհանքի գողտիքը հօգը բնութեան,  
 Որպէս սեւ արճիճ ընկած իմ սրտում:

— Լ՞որ կապրեն մարդիկ տիրար ու հօգը,  
 ինչո՞ւ է կհանքը ասնջանքներով լի,  
 Լ՞որ խեղճի բաժինն արցունք ամեն օր  
 Դատաւոր խասար անթափանցելի:

Չոր հացի համար կուտեն իրար միս,  
 Հարուստն իր գանձից միշտ անբաւական,  
 Խեղճը աշխատում, խեղճը միշտ լայիս,  
 Խոնաւ նկուղում՝ ընկած մշտական:

Կոնն գոյութեան սրբութեան սրբոց,  
 Թշառի կոծը՝ ուժեղի խրախման,  
 Մարդկային կհանքը գե՛ննի փառ բոց  
 Եղբայրը՝ եղբոր ոտխ, դաւանան:

Ստրուկը մի օր իշխող սուկալի,  
 Խսկոյն մտասցող իր կհանքը դաժան,  
 Դարձեալ պայքարը՝ անկերջանալի,  
 Դարձեալ ամենքը արնոտշտ գազան:

Ու այսպէս դարեր կուզան ու կերթան,  
 Չկայ երագում չքնաղ փառ գարուն,  
 Դարեր շարունակ, դարձեալ բիրտ շղթան  
 Խեղճի ոտքերին անդրա խասարում...

Արգար Պայազաս



Մ Ե Ն Բ Ո Ւ Ն Ք

Քաղաքագիտական

Ասանձնարան... կամ գրգարան, ինչպէս  
 ընդունեւած է կոչել նման սենեակները:  
 Նորատի մի կին շքիկ ձեռնաշարձայ  
 լայնազգեստում՝ զարդարեւծ յրիւսէկեան  
 փանեակներով, նստած է իր երկրպագուի  
 գիմաց, որ աննոզ կերպով տարածել է  
 ընդարձակ բազկաթոռի մէջ:

— Այդ ի՞նչ մտածմունքների մէջ էք խո-  
 րասուլում, պ. Գրիգոր:

— Ես մտածում եմ կրեակ կղզու մասին:

— Ես ի՞նչ էք մտածում նրա մասին: Է

— Այն՝ որ կրեակ կղզին շատ նման

ձեզ:

— Ի՞նչ:

— Այն: Շատերը ձգտում են տիրանալու  
 նրան, ամեն կայմից շրջապատւած է և  
 հնախելով որ մօտ է պաշարման բազկն,  
 սակայն անձնատուր չի լինում նա:

— Յապա գուք միթէ կըկամենայիք, որ  
 կրեակն անձնատուր լինէր:

— Այն ինչ:

— Իսկ յետոյ արգեօք ձեր միջոցները  
 բուական կըլինին ծածկելու նրա «ներքին  
 բարեկարգութեան» և «արտաքին քաղաքա-  
 կանութեան» ծախսերը:

Եւէրէս

ՀԵՆՐԻԿԻ ԹԵՏԻՆ

23 յուն. «Նոր գրախոս», Գրիգոր Գեղեցիկի  
 թատրոնի կարավարչի ծգտին խնդրոյ ճէր-  
 սպիբի յայտնի Համլէտ ոգրերգութիւնը:

Ես առիւի շուտ կանգ կաննեմ, Ամօ Սա-  
 րագեանի վերայ և խորհուրդ կըտամ, որ  
 այդ տեսակ բարթ պիէտներ թող չգնէ  
 Հաւարարի հայ հասարակութեան ստաշ,  
 որ նոր է իր աշքէրը բաց արիւ, նորան  
 հարկաւոր այնտեսակ պիէտներ գնէ նոցա  
 ստաշ, որ նոքայ կարողանան հասկանալ  
 և հետրոճեաէ հասնել Համլէտ ոգրերգու-  
 թեան. և նոյնպէս խորհուրդ կըտայինք որ  
 վերոցնի այդ տեսակ պիէտաներ և գնէ նրանց  
 խեղքին մօտիկ պիէտաներ: Իսկ ինչ վերա-  
 բերում է խաղին պ. Ամօ Սարագեանը շատ  
 թող կերպով տարաւ Համլէտի դէրը պ. պ.  
 Բարեանին և Երամեանին խորհուրդ կըտա-  
 յինք բժշկէն իւրեանց ձայնով, որով-  
 հետե դաւաճանում նոցայ ձայնը և  
 կարող են մի ժամանակ համնեն հասարա-  
 կութեան աշքի ընկնող դերասանների:

Տ. Կրնուէլը լա էր Օֆէլիտայի դերում:  
 Մնացած դերասանները փշայքին խաղը:  
 Հասարակութիւնը անկարգ էր, կարգապա-  
 հութիւն բոլորովին չկար:

Ս. Սխիրաբեան

ՊՐԵՐԿԻՐ ՔԵՐԵՆԳԸ

Իմ աչքի լոյս դայի Քեանպար ջան  
 Ծնըրճաւոր թագա Տարի.

Քեօճա տարին իսէկ տալան ետը գիւզ  
 սընաթի մինին փափազըս ըտաշիս անիրամ  
 մտքիս դօննի ընկալ մին էլ տեսնում մէր  
 տընացին եղ գեառ թա՛ «ս մարթ, պա-  
 բօլ չի վէր քոստուն օր Տարստովի մհարըս  
 սօք պահալ, քոստուն օր Բզմիրով կաթը-  
 զըլտօին: Ախրը թեազա տարի ա՛ մին գու-  
 նաղ եր կալ ամի, համ խոխա ըրախա  
 կուրթանան, համ թեազա տարին ըրխու-  
 թիւնամ կընթուներ, համ էլ՝ հընկեր հը-  
 բաւան կասին թա՛ հա դամքէշ Պտղոսն էլ  
 մին մարթ ա, մին մարիփաթլու մարթու  
 աղա հա»:

Քեանպար դայի, հինչ ասիմ, վէր մեր  
 պասկերը տաղըն թա կընկանը խեղքը արա-  
 նըմը կինի, գորթն տալ ես ինիմ իմ հիւ-  
 քին. թա ես կըտեսնաս կասին թա արիւր  
 էս սընաթի մինին ըրկուսին գունտաո հօ-  
 ըրմ հօր ծուպ՝ տրու-տու-տուն քցըմ—մեր  
 նանամ սանամ խանրմներին ըտաշներին  
 տիրամ լօտուն փողմիշ անըմ, մէր քըզարի  
 իշխաններին կարաի տալը ինկարըմ, կա-  
 տիցաններըմ քնն իլամ ջոհեկ-ջոհիւնէլին  
 քննը գհար անըմ մեր լուսավէրում ըղջըկ-  
 բանց սէրը մաժուն շինում: Քեանպար դա-

\* Տպում ենք սոյն «Երեկոյան» և խորհուրդ  
 ենք տալիս մեր միւս «Երեկոյաններին» պիէտների  
 քննադատութեան և խաղի մասին կարծիքների դա-  
 սեր վերցնել պարսն Սխիրաբեանից. մեզ թւում է,  
 որ պարսնը ուղղակի մի գարնապալա է կոչմում  
 հայ «քննադատական» ուղիսրճում: Ծան. խմբ.



յի, իսկ, գլխէս ձի ա քացի տուալ, թա  
բեանկի ըմ կէրալ վէր գուռնիս ծվանը  
քեօքիմ, դամը քըցիմ արար ըշխարին գույ-  
միշ անիմ թա՛ մին քանէ կապը կըտրած  
կնանէք սիւլէթա ըղջըկէրք երստ քըթըպո-  
շըն ըբալ հըթհըթա ըն տալիս, թէ հինչ ա  
իւրանց մածնին թանըմ ասալ. դայի, . ես  
հինչ անիմ, ես մեղավէրքմ, վէր իւրանց  
ըբարձունքը կզէթուը տեաջալըս, դէ հե-  
լա լեաւա վէր գիրալ չըմ թա՛ մզանըմ մօ-  
ղա ես տէնալ սեկրեանի քիւչաւ ման կեա-  
լը, քիւրը ախպօրը բրակավագ անիլը փառք  
ինի երկնային Տէրին վեր գիրալ չըմ թա՛  
աղջիկըմ տեսալ վէր պապուսը ըրըխին  
նստած լօթու փոթու նհետ շամ.զանա խը-  
մուս... ես հինչ գիտամ թա՛ էլ հինչ զան-  
ըմար: Կնէկըմ տեսալ վէց զօխաուըը քըշ-  
տին նստած ինքը քսասուն գրագուզ տքը-  
թիւնըմ, վէր լօտովի անըմը լսալ աղաջալ  
ա, ծլոնկ իլալ նստալ լօտօ խաղ ըբալ:

Գիրալ չըմ, իսկի գիրիլուվ էլ չըմ, ախըր  
հինչ օնիմ վէր գիրիմ թա՛ հարուստ միւլ-  
քատէր ըմ տեսալ, վէր բարեգործութիւնի  
մընար ձեաքը դուղգուղէլով հինգ մանէթ ա  
գիրուս ամմա ցիրկի մաղմաղէլի մհար հա-  
րիւր իցցուն մընըթանոց վէսգի մասնի ա  
փէշքէշ տանըմ: Դայի, մհէգ դու ախ ախըր  
ըստի պէնէրը վէր քուսայած ըջքէրավ  
տեանոզ սէրա կանի գուռնա եօր օնի արու-  
տու-տուն քըցի, թա՛ հինչա—թեազա տանրի  
ա գեալիս: Մին թեազայ տարի վէր զօն-

թիկի մնան շիլարավա գեալու հեաքին քըշ-  
կըսած տէրեա նէրակըմ տալ հըղէն մնայ  
վէշ գեայ. էն վախտը քասիք քուսուրի ջու-  
բուսն էլ սիրքա (փող) կըմնա: Մէր հա-  
րուսաներին, առուտուրականներին վէշ տօ-  
նը տօրկալ կըծախի, վէշ սեանաղը (մուր-  
հակ) լըտարիւսի կոշուր կըքինի:

Հեալիշա էսքանը: Մնամ քու ազիս տե-  
սութիւնիդ կարօտ բաջողի՛

Գեալիս Գեալիս

Ե Ր Ե Ք Ը

Մա.—Ո՛ւսն էք ուրեմն նախագասուս.  
Ինձ, թէ Արշակին:

Նէ.—Օ՛, ես սիրում եմ ձեզ երկուսիդ էլ,  
բայց ձեզանից աւելի՛ սիրում եմ Արամին:

ԿԵՂԾ ԱՏԱՄՆԵՐԸ

Մա.—Եթէ ես գիտենայի թէ ատամներդ  
կեղծ են...

Նէ.—Դու չէիր ամուսնանայ հետս:

Մա.—Ո՛չ, բայց աւելի մեծ օժիտ կըպա-  
հանջէի:

**ՆՆԻՐ ՕՐ. ԴՈՂ. ՏԵՐ-Ց. ԻՆ**

Վատող զարունքի նամրոյրը դէմըիդ՝  
Փթթիկ ես, ինչպէս վարդ խա՛ր երազում,  
Անվերջ, անամուրջը երազող կրծքիդ  
Ժաղկունանց այրող մըմունջ: Է խօսում...

Դու վարդ ես չընաղ... բայց վարդի գույնը  
Թերթերում պահած էր որքոյր ունի  
Անրոյր վարդն աննոգ պոկեն, կոխ կրտան,  
Իսկ բուրսւնտին—կրծքում՝ ապաստան:

Գեղեցիկ ես դու... բայց չէ որ դալար,  
Իր մարմնից բացի կայ պահած նոգի.  
Գեղեցիկ մարմնի կիրքն է սիրանար,  
Իսկ նոգուն—անմեղ բոյրը գգանքի:

Արեւիկ

25 մանէթանոց բաղը

Սղնախիցի Մելքոն, մի շաղ բաղ երկու  
ձեռքով գրկած տանուս էք փողոց ծախ-  
լու, ճանապարհին մէկը մօտեհալով Մել-  
քանին հարցրեց բաղի գինը:

—25 մանէթ, սոցա ջան:

—Տօ, գիժ ես, ինչ է... բաղի գինն է  
չորս արասի. մի մանէթ. բայց ինչ 25  
մանէթ, եզն ես ծախում, թէ՛ գօմէշ...

—Վա՛, էն օրը մի պստի դուշ ծախեցին  
5 մանէթով. սա քանի նրա տօլ կուլի, Չէր  
սա տեղ էլ աժի...

—Տօ, յիմարի գուլիս, էն սոխակ էք, նա  
կըզում է, իսկ սա՛...

—Վա՛, անբաւական կերպով պատարիտ-  
նեց Մելքոնը, —նա երգում է իմ բաթն էլ  
փիքը է անուս...

**ՀՅՈՍԳՐՆԵՐ**

(Յատուկ թղթակցից)

Կօջօր.—Դաշնիկներին Թիֆլիսից Կօջօր  
տանուգ-բերող գիլըջանատէրերը տոանձին  
խորհրդակցութեան մէջ յետաձգել են Կօ-  
ջօրում երկաթուղու կառուցման խնդիրը:

Մանգլիս.—Մանգլիսի ստարշինա Վ. Դիւ-  
զուրբակին այս ձմեռ կըմնայ Մանգլիսում:  
Թոննիթ.—Մամասախլիսի խորհրդում  
մօտ օրերս կըքնուի երկաթուղու գիծ անց-  
կացնելու ծրագիրը:

Ժղնէթ.—Ծղնէթի գործապանութիւնը  
գործադուլ յայտարարեց: Թիֆլիսիցի  
ստիպած են քարածուխ գործ ածել, որից  
շատերը շուտ-շուտ ուզար են ստանում:

Մցլսէթ.—Մցլսէթի մամասախլիսի հրա-  
ժարականը տեղական գիւղացիների կողմից  
չէ հաստատում:

Շվիկիս.—Տեղական թերթերը հազու-  
գում են, որ տեղոյս մամասախլիսի օգնական  
Չաքարը երկու ամուս արձակուրդ է ստա-  
ցել Տարախիլա գնալու, հանքային ձորե-  
րում և աղպանոցներում բժշկելու համար:

**ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ**

ՄԵՐ ԲԱՐՔԵՐԻՑ

(սեփական թղթակցից)

Դիզուս, 2 փետր.

Որքան որ նախանձիկ է մեր քաղաքի ազ-  
գաբնակութեան առաջագիմութիւնը, նոյն-  
քան ես զարմանալի է նրանց դէպի թա-  
րոնն ու եկեղեցին ունեցած առեւտրիւն:

**Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն**

**№ 1 Բ Ի Բ Ա Ռ № 1**

Դրական-բաղաբական-նստարական եւ  
խրատողական օրաթերթ:

Բաժանորդագրութիւն չենք ընդունում,  
իսկ հատաձեւատին բոլորովին հակառակ  
ենք:

Տպում ենք 10000—15՝00 միանգա-  
մից գասարների վրայ փթով ծախելու:  
(օրինակը մասամբ վերցրած է «Հորիզոնից»):

**Առաջնորդող**

Այն բոլոր հայ թերթերը, որոնք իրենց  
առաջնորդողներով կամենում են շլացնել  
հայ հասարակութեանը, որոնք լոկ միայն  
գրչով են հայի պաշտպանը հանդիսանում և  
ամեն մի քայլափոխում պատրաստ են  
հայութիւնը ոչնչացնել, միայն թէ իրենց  
գրպանը մի բան մտնի, իսկ հայ հասարա-  
կութիւնը հաւատ ընծայելով օրեցօր քանդ-  
ւում ու աւերում է, ուստի մենք երեան ենք  
գալիս այս ամենագիւտ Ժամանակներում  
խոչնդոտ հանդիսանալու նման թերթերին  
և ազգութիւնը ազատել վերոյիշեալ թեր-  
թերի խմբագրութեան ճիւրաններից:

Հրատարակախօս

(Կըշարունակի)

Օճրոգանցի



Կ Ա Ն Դ Ա Կ

Եւ, ծառայ Գաղափար Կալստոպոլի, ձեռքիկ Արեղայ, վիճակաւոր առաջնորդն Կիւսնի և Մազանդարանի: Քարոզչապետն միակ ազգային խաթարալայական կուսակցութեան, որմէ արժանացեալ ծայրահեղ կոչման, գաւազանակիր՝ վարձատրեալ Գուրեան պատրիարքէն Կ. Պօլսոյ հաստ գօպայալս (որ է հաստագլուխ մահակ մեծ), որով պաշտպանեալ լիցի անձն մեր ի մէջ ազգային ժողովոց, իթէ Ռուսաստանէն զահի-հարեալ և փախեալ ի Կ. Պօլսոյ բոլորող ազգային գործիչքն վտարին թուրքիայէն ևս. և երամօք ու նախօք խուժեն ի Պարսկաստան և պաշտպանութիւն գտեալ կուսակցութեան հովանաւորեալ վսեմավայլ եփրեմ խանէն (մեծանուն հիմնադիրն սիւնիոյի պօլիցիային ի Պարսկաստան) և ուտիկանապետն Թէհրանի, ի մէջ տեղական ազգային ժողովոց, սրօք և բրօք և զօպպայալս յարձակում գործեսցին և այլն, և այլն, ամէն:

Ողջոյն, սէր և խաղաղութիւն համայն Ասորոնադեան տանն և սիրելի ազգին մերոյ թորգոմեան, նամանաւանդ ազգասէր գործչաց մերոց որ ի կաւկազ և խեղճ ու կրակ ժողովրդին յետէն իրեանց աջ և ձախ քարշող մեծամեծաց, որք են՝ Ղազարու Աղայան, Համբարձումա Առաքելեան, Սեդրակայ Մանդիլեան, Լէօի Բարախանով,

Նրանք օրեց օր առաջագիւմում են և եւրոպական քաղաքների բոլոր մօզաները ի կատար ածում, իսկ թատրոնն ու եկեղեցին միշտ մնում է նախ ազգասիրկ գրութեան մէջ:

Ահա, մօտ չորս տարի է, ինչ այստեղի քահանան ամեն պատարագից յիտոյ քարոզ է խօսում և շեշտում, որ իր փարաջան խունացել ու հնացել է, որ ժողովուրդը պարտական է իր մօզաներից մէկի փոխարէն իրեն համար մի մօզնի փարաջայ կարէ, բայց խեղճի ասածները միշտ մնում է «ձայն բարբառոյ յանապատի»:

Մի խումբ դերասաններ, որ մի քանի շաբաթ առաջ եկան Աւճալից, սենցած փողն էլ աֆիշաների ու գրիմների վրայ ծախսելուց յիտոյ մնացել են այստեղ կանգարանով: Մտադիր են մի ներկայացում ևս տալ ճանապարհածախս ձեռք բերելու համար: Մաղալու են «Երկու քաղցածներ»:

Տեղական վարձագրի

Լ Ր Ա Տ Ո Ի

Թիֆլիս

— Քաղաքային վարչութիւնը մտադիր է Կուր գետում գործող ըրումը Պետերբուրգ ուղարկել Նեայի վրայով ապրանքներ տեղափոխելու համար:

— Մի խումբ հմուտ կանանց ձեռներեցութեամբ, մօտ օրերս Թիֆլիսում բացելու է պողոտի կարմրադեղ և նման պիտոյքների բարձր գաւազնակներ:

Յովհաննու թումանով, ս. Հօրն վեղարբեգեան, Աղէքսանդրի Քալանթարեան, Կոստանդինուպօլի Մատիսովեան, Շիրեանի Ջաղէեան, Բուղդանայ Երիցեան, Ալէքսանդրէ Մատիսովեան, Ատրպետի Մամադ-Ալի-Շահեան, Յովհաննիսի Յովհաննիսեան, Սպանդարի Նորգարեան, Սեդրակի թառաշեան և նորիւրէկ գրչակաց, որ ձգտեն ժառանգել յիշեալ մեծամեծաց, ողջոյն հովական թափեսցի ի վերայ այդմ մազոտ և անմազ պիտոց (որ և սախ քաշալ). ամէն:

Միտիւրդ մեր՝ Քանդի ի քաղաքակիրթ աշխարհս եւրոպիոյ, յորժամ ընտրութիւն լինիցի նախագահի կամ այլ բարձր պաշտօնէի, իւրաքանչիւր որ, որ կամի գանձն իւր ընտրելի անել (կամ ծախել). հրապարակաւ առաջադրէ իւր պլանքն, իւր ծրագիրքն զպատասան և զպատասխան և զպայտակն և եթէ կարողութեամբն Աստուծոյ ընտրեսցի, որպիսի գործք կատարելոց է: Եւ քանզի ազգն մեր ոչ պակաս քաղաքակրթեալ է այժմ, շնորհիւ բազմաթիւ ուսումնականաց, որք թափառեալ փողոցքն ժնկայի, Փարիզի և Վիեննայի, վերադարձեալ լուսաւորեն ազգն մեր, ուստի, մենք ևս ըստ օրինակի քաղաքակիրթ ազգաց, մի կողմ շարտեալ կեղծ համեստութիւնն, ըզնրւատա անձն մեր առաջադրեմք որպէս ընտրելի կաթողիկոսական Աթոռոյ Լուսապայծառ մօրն մեր Շոգակաթի Սրբոյ Էջմիածնի: Մոտանամք առաջի սիրելի ազ-

— Թիֆլիսում կազմել է մի ընկերութիւն, որը, քաղաքային վարչութեան ջգրու թիֆլիսում ձերբակալած մկները Օգեսոսայ է ուղարկում:

— Քաղաքային վարչութիւնը իր վերջին նիստում որոշեց, որ անդամներից մէկին ուղարկէ Օգեսոսայ, այնտեղի մկնադատութիւնը ուսումնասիրելու համար:

— Կովկասի հայոց հրատարակչական ընկերութիւնը չկարողանալով գրքեր հրատարակել, որոշել է ապել բոլոր հայ թատրոնների աֆիշաներն ու ծրագրները: Այս նոր որոշումը բաւական զովելի մի երևոյթ է, քանի որ հայ թատրոնների վարչութիւնները աֆիշաների ու ծրագրների վրայ ծախսելիք գումարը կը բաժանեն դերասաններին:

— Մարագրութիւնս Թիֆլիսի հայ վաճառականներից ստացաւ 4 0 բուբլի, աղքատներին փայտի համար բաժանելու, որի համար խմբագրութիւնս յայտնում է իր խորին շնորհակալութիւնը:

— Իերասան Անտիգեանը յայտնեց ոստիկանութեան, որ մի անյայտ չարագործ յարմարեցրած բանակով բացել է իր սենեակը և ոչինչ չգտնելով թօգել է իր կըրկնակոշիկները, որ այժմ ինքն է հագնում, Անտիգեան խնդրում է չարագործին չձերբակալել:

— Նոյն օրը Կօկլօ Դաւիթը մանկով ստեփանաստան սկսել է հայնոյի ոստիկաններից մէկին, պատճառների հարցաքննու-

զին մեր, յետ ամբաստանող Թիֆլիսի լուսաւորչի և կրիւոյ ի վերայ սիրելի մեր լուսաւորչոյ և ճանաչախալ խաչն ազամանդեայ (մի... որպէս ձմի սիրաս այդ փափագօք), լինեմ հաւատարիմ, օրինապան, բարեգութ, բարեխիղճ, և ամենայն ինչ, որ հաճելի լինի սիրելի ազգին մեր: Եւ վերոյիշեալ մեծամեծաց խոստանամք այժմէն.—

Ղազարու Աղայեան.— Որպէս ազգային մանկավարժի, ուսուցչի, թեմական տեսչի, «Արարատ»-ի խմբագրի, գրագէտի և վերջապէս խնդրատուի՝ վասն ձեռնադրելոյ վարդապետ,— խոստանամք սրբատառ կոնգալօք՝ չեղեալ համարել վճիռն Մակարայ առաջնոյ կաթողիկոսի, որով առաքէր զնա ութ տարի ժամանակաւ անապասն Սեան՝ ապաշխարեկ և ապա ձեռնադրել, և ձեռնադրելով այժմէն վարդապետ, կարգեմք խմբագիր «Արարատ» ամսագրի: Այսպիսով, նախ ազատեմ զնա զմատախլապատ «Հորիզոն»-էն ամբողջն խոսնիճաղանճ ջանէլջուհուրաց, որք կամին շահագործել զսիրելի աղագարգն մեր և սպանան յիտունամեայ ջանիւք ձեռք բերեալ փառքն չորս գրօշի անել: Երկրորդ՝ առաջին օրինակն ամուսնացեալ վարդապետի լինելով,— ամամահանայ և ջանէլջուհուր վարդապետքն (որոց բերանի ջուրն վաղէ վասն ամուսնութեան), ի տեղի սրբոյ երկրպագեսցեն զնա:

Համբարձում Առաքելեան.— Վասն քաղաքատիկ մրցմանն մի կողմէն ընդ խում-

թիւնից երեացել է, որ չարագործը քնելու տեղ չունենալով կամեցել է այնտեղ գիշերել:

Բ Օ Ր Ս Ա

Թիֆլիսի բորսաներում տիրում էր ոչ միատեսակ արամադրութիւն: «Մշակ»-ի բաժանորդները առաջ շատ էին, յիտոյ պակասեց: «Սուրճանդակ»-ի համարը ծախում է 5 կոպէկով, ցրելիները տանում են 4-ով: «Հորիզոն»-ի գործարանատէրերը աշխատում են ուրիշ քաղաքներ շատ ուղարկել, բայց չի գնում, փթի տակ մեծ պահանջ կայ: «Հորիզոնից» պատրաստած սուպրակները ծախում են 6 կոպ. Ֆունտը. պուզով գնողները տանում են 5 1/2 կոպ.:

«Մաթարալայի» արժէզիրը նոյնն է: Կայծերի յաւելածը լուսին լուսին է լոյս տեսնում:

Շուկայում մնացած հայ թերթերը վաճառում են նոյն գներով: Գիւղաանտեսը հազիւ թէ խմբագիրն է գնում:

Թ Ա Տ Ր Ո Ն

Չարալովի անուն ժողովրդական տուն Անցեալ կիրակի, հայոց գրամատիկական ընկերութեան թատերասերների խումբը բարեհաճ մասնակցութեամբ պ. Շահխաթունու, ներկայացրեց «Քին» 5 գործողութեամբ դրաման:

Նախ քան վարագոյր բարձրանալը ընկերութեան անդամներից մէկը վարագոյրի

բազրին «Մշակ» լրագրի, որ ոչ թույլատրել  
 գնա արձակ-համարձակ մարակիլ գործա-  
 նաւորան, (քանզի ոչ կամի ոչ սքի խաթրին  
 կպչել), միւս կողմէն մարտնչէր հերոսաբար  
 ընդ ազգային գործչաց և կործանարար մո-  
 նօպօլիտաց. միաժամանակ՝ նստեալ ի վե-  
 րայ Պէգաս հրեղէն ձրոյն, սլանայ ամենայն  
 կողմն աշխարհի—մի յեջմիածին, մի Պօլիս,  
 մի Եւրոպա, մի յեջաս, մի Ալժիր, մի Մէք-  
 կա և մի յԵրուսաղէմ: Խոտանամ յամե-  
 նայն ջանիւք աշխատել և յոյս մեծ ունիմ  
 յաջողել և ընտրել տալ գնա պատրիարք ս-  
 Յակոբիայ վանուցն Երուսաղէմայ: Անեղի-  
 բայ եմք, զի ի պատրիարքութեանն Հաջի  
 Համբարձումայ ստաջնոյ, Գաշնակցականք  
 ոչ յանդգնին գօպպայիւք մուտ գործել յե-  
 րուսաղէմ և միտինդ կազմել ի մէջ տաճա-  
 բին ս. Յարութեան:

Սեղիւր Մանդիկեան.—Որպէս բազմե-  
 բարսա գործչի ազգային անդաստանի, հրա-  
 մայեմք մտանապետին Էջմիածնի տալ  
 գնա օրական վեց սօմին հաց, 3 ֆունտ  
 միս, բակլայ, սրինս, յօրիա և այլ ուտե-  
 լիաց պարէնս, զի ազատ լիցի չոզուն  
 մի կտոր նացի և ազատ զբազեցի գրա-  
 կան յոյս օգտուէտ աշխատութեամբ:

Աէօ Բարսիլանով.—Քանզի նման բնա-  
 կորոյն թռչունի, մտանէ ստաջին՝ պատա-  
 հեալ պատի խոռոչն և մինչ փոքր ինչ հան-  
 գիստ տայ խոնջեալ մարմնոյն, անս ազաւ

և հիւք «Թուցիկ»—օք խուժին ի վերայ  
 նորա և հորիզոնէն խտիկ տալով ի բաց  
 վտարեն. և քանզի խեղճն իւր իսկական  
 բոյնն իսպառ կորուսեալ է, ուստի թռչի և  
 ճախրէ աստանդական և ապա կրկին մտա-  
 նէ նոյն խոռոչն և ծուարի լռեկայն: Ա-  
 նեղիբայ եմք, զի նա ոչ է ընդունակ ձայ-  
 նիւ ազաւաի կոանչել, ուստի՝ յորժամ բա-  
 ցէ բերան իւր՝ նորէն գայլայլէ, ազաւք և  
 հիւք կրկին ի գայլութ բռթեալ, խուժին  
 ի վերայ նորա և կտցահարելով զլուին  
 և աչբունքն, ընդմիջ վտարեն ինքենէ:  
 Մենք տամք ապրուստն նորա և մատենա-  
 դարանն Մայր Աթոռոյ—թող բազմավա-  
 տակն ազատ լիցի ժխորէն ազաւաց և  
 պրպտեալ անցեալն ազգիս, յաւելու հատոր-  
 քն պատմութեան, որով յոյժ միտիմարէ  
 կտրած սիրտն ազգային Սև-Սանդուխ:

Յովնանու Թումանով.—«Շուքն ու կա-  
 տուն» անմահացուցին գնա և դասեցին  
 ի շարս ազգային գուսնաց, սակայն նա  
 ոչ իմացեալ փառքն իւր, թողեալ «ԳՇուքն  
 ու կատուն» մտաւ ի մէջ գառագեղն գայլ-  
 գաղանի և երկնչիմ գովաւ կորուսանէ փառ-  
 քն... վասն անւանի և ճարտարախօս թա-  
 մադայութեան, հանեմք գնա դառագեղէն և  
 տալով էլէքարագարդ բնակարան Երեմիա-  
 շէն խուցերէն և դապրուստն, կարգեմք գնա  
 վանական թամագա՝ ի վերայ պաշտօնական  
 սեզանից:

Ս. Հօրն վկարաբ գիցի, ի թոյնն ինձ  
 տալ ապահարզան այնմ ինչ տանտուրու  
 հուն, որ պատճառ եղև քո «սնատրման»  
 և ապա կապելով «գիւնաչ—կարմիր» —

Արձակեմ քեզ երբ ուզես,  
 Գնաս ազատ արածես ..

Ալէքսանդրի Բալանժարեան. — Պլանն  
 վանուց և զեթ մատակ գովէշքն, 40 կոֆե,  
 70 այծքն 200 աւանակք. և զխնոցիքն և  
 զբզուզ—բժուծքն և կովկիթքն համայն  
 գնեմք ի տրամադրութեան նորա և ինչ  
 սրտամի կամի խնոցքն հարիցէ, և պանիր  
 մակարթեցէ, ի պոյժաուութիւն ազգային  
 մտնարանութեան: Ամին:

Կոստանդիանապօլսի Սաախեան. —  
 Քանզի ի մէջ ազգիս յայտնի է որպէս յո-  
 չընչէ ամենայն ինչ յօրինող և աներևակայե-  
 լի գործք հեղինակող, մեծամեծ պլանօք և  
 ձեւարկութեամբք աշխարհ զզրգայնող,  
 ուստի—40 ամիայ ժամանակաւ տալք ի-  
 բաւուր մօնօպօլ կոչեցեալ՝ կառուցման  
 աստմուսար երկաթուղոյ ի Մայր Աթո-  
 ռէն մինչ գազաթն Արարատ լեռան և ըն-  
 գարձակ տեղ մի վասն կայարանի յԱկոտի  
 գեղջ և արզիւնքն գորա յատկացուցանել  
 կուրտուրական ընկերութեանն նորա, որ ի  
 Բագու, զի կոռուցէ մահարձանք ազգային  
 գործաց՝ Ս. Արովեան, Ս. Նազարեան, Ս.  
 Շահագիդ, Ռաֆֆի և այլն:

Շիրանի Զաղէեան.—Շնորհաւորական

տակից գլուխը գուրս պրծեցնելով կմկմա-  
 րով զեկոյց, որ պարսն Շահխաթունու քէ-  
 ֆը մի փոքր լաւ չէ, ու եթէ մի քիչ հան-  
 զլիշ խաղա բեղամազ չլէք:

Վարագոյրը բարձրացաւ և մենք բազմ  
 ոնեցանք տեսնել յայտնի գերասանուհի  
 ու բեմի համար ժիւնգամայն աւելորդ օրի-  
 որդ Սողովեանին, որը զանազան տեսակ  
 զէմքը ծանոթելով բացի յուշարարին նա-  
 յիւրց, օպերային երգչուհու նման շարու-  
 նակ զէպի պարտէրն էր նայում, որտեղ ա-  
 ստաջին կարգում բազմած էր նրա զերթնօր  
 հայրը իր աղջկայ բնական փառքը աւելի  
 մօտից տեսնելու:

Այդ գիշեր բեմաստի պ. Արմենեանը  
 յայտնի չէ թէ ինչու էր բեմը հմուտ սի-  
 բոգներով զարդարել, որոնք փայտի կտոր-  
 ների նման էին այս ու այն կողմը ընկե-  
 նում, նրա համար, որ Շահխաթունին նը-  
 բանց մէջ աւելի աչքի բնկնէ, թէ որպէս  
 զի նրան աւելի խանգարէն:

Պ. Միրզոյեան և պ. Գուլագեան իրենց  
 օտեղձած խաղով աշխատում էին մնացած  
 դերակատարների ամպետութիւնը ծածկել:  
 Ա.Ստամակ

**ՓԱՔՐԻԿ ՁԵԼԻԿՏՈՆ**

Սիրահարւած գոյգը բարձրացաւ զէպի  
 Բատանիական այգին և մի նստարանի  
 վրայ կողք-կողքի նստեցին:  
 Երկուսն էլ լուս էին, երկուսի սրտերն  
 էլ բարախում էին 90 կօպէկանոց ժամա-

ցոյցի նման, բայց ոչ մէկը նրանցից չէր  
 վստահանում ստաջինը խօսել:

Նրանք մերթ-ընդ մերթ նայում էին ի-  
 բար երեսին, ու յանկարծ ցած նայում:

Վերջապէս օրիորդը չչիմանալով այդ  
 պանջանքին գունուրելով և կմկմալով  
 ստաց.

—Ապա եթէ հայրիկս չհամաձայնուի...

—Օ... ես կըստանեմ նրան.—տեղից վեր  
 ցատկելով բացականչեց սիրահարւած պա-  
 րունը և մտոր ճակատին դնելով կամաց  
 նստեց իր տեղը:

—Ինչ յիմարն ես եղել Վասեա, չէ՞ որ ես  
 նրան շատ եմ սիրում, իմ հայրիկը շատ  
 լաւ հայրիկ է, նա ինձ թոյլ է տալիս օրե-  
 րով թափառել, նեղացած ստաց օրիորդը:

—Ուրեմն դու ինձ չես սիրում, դու քու  
 հայրիկին ես սիրում: Իսկ ես քեզ համար  
 մտացել եմ իմ հայրիկիս էլ, իմ մայրիկիս  
 էլ: Ընդ որին, այն օրից, որ մենք սիրա-  
 հարեցիք, դասերս էլ չեմ կարողանում  
 պատրաստել, իսկ դու ասում ես, որ հայ-  
 րիկին եմ սիրում. երեսը շուտ տալով ստաց  
 Վասեան և հանելով զբզանից թանաքտ  
 թաշկինակը մօտեցրեց աչքերին:

—Ինչու ես նեղանում սիրելիս, ես քեզ  
 էլ եմ սիրում, իմ հայրիկին էլ, ես այդպիսի  
 բնուրութիւն ունեմ, ես ամենքին սիրում  
 եմ, կարող է պատահել, որ մի ուրիշին էլ  
 սիրեմ, քայց քեզ աւելի եմ սիրում.—օրի-  
 որդը ձեռքը դնելով Վասեայի գլխին, շարու-  
 նակից խօսել, որ յանկարծ բազմանչին  
 մտենալով նրանց ստաց.

—Այգին փակելու ժամանակն է, հեռա-  
 ցէք:

Սիրահարւած գոյգը, որ երբորդ բաժան-  
 մունքներում երկու երկու սարի մնացող  
 աշակերտ-աշակերտուհի էին, վեր կացան  
 նստարանից անիծելով բազմանչուն, որ  
 խանգարեց իրենց բազըր խօսակցութիւնը  
 ու շեմիշկայ ուտելով դուրս եկան այգուց:  
 (Կըշարունակելի)

Քանասեկծ


**ՅԱՅՏԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

«Բիրսու» օրաթերթի համար հարկատուր են  
**ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ**  
 Արոնք միևնոյն թիւթում կարողանան իրար  
 միս ուտել, հայհոյել, իրենց արարքները  
 իրար երեսով տալ, իսկ երկուները պապաւ-  
 ներում մէկ-մէկու կենացներ վայելել:  
 100-2

Մամուլի տակ է և շուտով լոյս կըտեսնի  
**Գ Բ Ա Գ Ո Ղ**

Ուրեղիկութիւն 5 գործողութեամբ  
 Նիւթը ձկնեցրած է զանազան գլբերից,  
 թերթերից, պիէաներից ու վօգեվիլներից:  
 Հեղինակը իր այս նոր պիէաը թող է  
 տալիս բոլոր հայ բեմերի վրայ խաղալու,  
 այն պայմանով, որ իրեն բեմ դուրս կան-  
 չեն:  
 3-1

Նմրակիր-խայտատկի՝ ԱԱԽՇՕ







—Ձեր ազգը ինչպես է:  
 —Ալեքսանդր Իվանովիչ Գուչկով:  
 —Գուչկով, բայց ձեզ որտեղ եմ տեսել... Սիրի-  
 դում, երբ ես...

—Ինչ էք հրամայում, Աստուած ոչ անէ. ես լի-  
 նում եմ Գետական Դումայում. նախագահ եմ:  
 —Որտե՞ղ, Գետական Դումայում... դա ինչ բան է:  
 —Գետական Դումա, ձերդ ...ութիւն. դա մի մեծ  
 հաստատութիւն է, օրէնսդր...  
 —Հը՞՞՞ր... չեմ յիշում:

ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ,



ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԻՆՉ Է ՍՊԱՍՈՒՄ.

կոնդակ մի վասն յօրեկանին և բարեմադ-  
թութիւնք, զի պարզերես—ամօթն երեսին  
դուս եկեացէ յայնմ շրջանէ, որոյ չէր ար-  
ժանի, ստեղծն աշխարհային փորձանք և  
անտեսական պայմանք ակամայ արկին  
զնա... Այլոց հանէր Քաստէն, այսօր ինքն  
անկեայ է ի մէջ Քաստի: Ամենակարողն  
Աստուած պարզերես հանեցէ զտաղանդա-  
ւորն ի Քաստէն և հասուցէ ի խաղաղ նա-  
ւահանդիսս:

Բողոքանի Երիցեան.— Հայրապետական  
կոնդակ վասն արեւշատութեան, զի իւրով  
«Սուրճաւորակ»-ով պաշտարանէ տունն Աս-  
տուծոյ, որ ոչ արասցին այլս աւազակաց:

Ալէքսանդրի Խասախան.— Օրհնութեան  
կոնդակ, որով կարգեմք զնա դամբարանա-  
խօս ի վերայ անւանի ննջեցելոց և եթէ  
հաճի՝ ձեռնադրեմք վարդապետ և յետ ե-  
րկից ասուք՝ եղիսկոպոս և կարգեմք առաջ-  
նորդ թեմի Վրաստանի և Իմէրէթի, քանզի  
Մեսրոպը եղիսկոպոսն այժմ... այլ անկա-  
լութեամբ... ոչ փափագի այդ պաշտօնին:

Բ. Վ. Վարդապարեան.— Ամենայն բե-  
րան օրհնէ քեզ: Օրհնեալ էիր և օրհնեալ  
լինիցիր ի Տեառնէ. ամեն:

Ատրպետ Մամադ-Ալի-Շահեանց.— Փո-  
խանակ ի Վրաստան դեգերելոյ, էջմիած-  
նապատական Արս կոչեալ կալածքն դեմք  
ի տրամադրութեան նորա, մեքենայուք նո-  
րահար փորփրեցէ և կուզէ նաւթ հանե-  
ցէ գեանեն, կուզէ գծէթ կուճուկի:

Սեղարքայ Թատայեան.— Հրամայեմք օ-  
րագրով ս. Մինօզին, ընդունել քեզ ի ծոցն  
Հայաստանայց Առաքելական սուրբ եկե-  
ղեցոյ, որ յետ այսու անկրօնութեամբ  
պարծեցող հոքարարձուքն՝ Լուսաւորչական  
խմաստակքն գերազանելով, ոչ մերժեն տալ  
քեզ պաշտօն ուսուցչութեան յաղգային  
դպրոցս:

Սպանդարի Մորդարեան.— Ընդհանրա-  
կան թղթով յայտարարեմ անմեղութիւնն  
և երեսիդ կաշոյ պնդութիւնն, որ կարող  
եղեր ի մէջ հարիւրաւոր անմեղ գատապար-  
տելոց, երևան հանել զըպարտութիւնն  
սուրբ կուսակցութեան և զպաշտօնակցիան:  
Օրհնելով օրհնեմք զհամբերութիւնն, զան-  
գուլ ջանքն քո, սրով պատուեցիր անթա-  
փանցելի վարագոյրն և երևան հանեցիր  
խարզաւանքն. ամեն:

Յովհաննիսի Յովհաննիսեան.— Աստա-  
նամք մշտապէս պահել քարտուղար Մինօ-  
զի, եթէ մտրակաւ փանկեցէ Պառնասեան  
մուսան յինքեանէ:

Եւ սովաւ բացատրելով մեր ձգտումքն  
և ուղղութիւնն, փոստաբարձ գնեմ քէլա-  
տուփն նաւասիս յընտրութիւն կաթողիկոս-  
սական գահաւորս Մնամ բողոքականաց յաջո-  
ղութեան գիշեր-գիշիկ ուղթով և հայցող  
ի տեսանէ զի հառապայթ լուսոյն փայլե-  
ցէ զժիսս սիրելի ազգին իմոյ՝ վասն ըն-

տրելոյ զարժանաւորն, որ ներկայանայ  
նւաստ անձն մեր, ամէն:

Աղօթարար ազգիս  
Վիճակաւորն Գիլանի և Մազանդարանի  
ի 1911 Փրկչական, ի 20 յունարի  
ի մայրաքաղաքն Խուստանի.  
Ճնդրիկ Արեւայ



ԻՄԱՍՏԱՍԵՐԻ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԻՅ

Անշնորհք մարդիկ միշտ օժտուած են մի  
ձիրքով, զա է՝ իրենց տաղանդաւոր երևա-  
կայելու ընդունակութիւնը:

Մէքն աւելի հասկանալի է երկու սրտե-  
րին, քան երկու գլուխներին:

Կորցնել խելքը մի սիրուն կնոջ համար  
աւելի լաւ է, քան կորցնել գրամաքակը՝  
երբ դրամի կարիք կայ:

Ներկայից յագնալով՝ մենք սնուած ենք  
անցեալի յիշողութիւններով:

Շատ հարուստ մարդիկ՝ երբեմն ոչինչ  
չեն արժեւում:

Խելօք մարդը առանց տխմարների մի օր  
անգամ չէր կարող գոյութիւն ունենալ:

Ազնիւ կինը շատ յաճախ «ընկնում է»  
իրեն նեցուկ տղամարդի պատճառով:

Եւէրես



Յանանկալով մեր բոլոր բաժանորդներին ամենայն տեսակ բարիք, մենք խոր-  
հուրդ ենք տալիս բաժանորդագրել և ամենօրեայ հայերէն  
ամենամեծ ու օգտակար

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական  
լրագրին, որ գեկտեմբերի 1-ից հրատարակուած է ամեն օր, այն  
ուղղութեամբ և այն ծրագրով, որ ունեցել է սկզբնաւորութեան օ-  
րից և որը գոհունակութիւն է պատճառել ընտիր և բանիմաց հասա-  
րակութեանը:

«ՍՈՒՀԱՆԴԱԿ» տարեկան բաժնեգինն է 10 ռ., կէս տարւանը 6 ռ.  
Սակայն «ԽԱ.Թ.Ա.Բ.Ա.Ա.»-ի բաժանորդների համար պատրաստ ենք գիշել և  
տալ հետեւեալ գներով:

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» եւ «ԽԱ.Թ.Ա.Բ.Ա.Ա.» միասին

Տարեկան . . . . .	12 ռ.	Երկր ամիս . . . . .	4 ռ. — 4 կ.
Կէս տարին . . . . .	7 ռ.	Ամիս . . . . .	1 ռ. 50 կ.

Մեր հասցէն՝ Թիֆլիս, редакция „Сурандакъ“,  
Հեռագրով՝ Թիֆլիս, „Сурандакъ“

ՊՈՍՏԱԲԵՂ

Թիֆլիզ. Թերթայինի բաժնէն ինչպէս ինչպէս  
մեն տաղանդ ունենալով, այդ ինչպէս ձեռ  
ամեն մի տղայից. գուր ասում էր.

«Եւ ես յամ եմ, զգում եմ, տես-  
նում եմ... այս բոլորը յօգուտ ձեր տա-  
ղանդի են խօսում:

Բործով պ. րնկեթիւն. Ոչինչ, բայց միքիչ երկար  
է միքիչ անհամ է, միքիչ կրկնուած է  
ուրեմն և անպէտք է:

Սարասով պ. Արեւիկ Հովսեփեանցին. Ասա-  
ւած վկայ 1910 թ.ի 41 № ձեր չարը  
տարաւ, կարգապէք յաճորդ 42-ը սկզբ-  
րից և երեք անգամ, բոլորը կիմանար:

Էջմիածին Վ...սին. Ասաւած համբերութիւն  
տայ, էրի յուր պիտի համբերէք. մենք  
որ ձեզ համբերում ենք, դուք ինչու  
չպիտի նայնք անէք:

Թաւրիզ պ. Մ. Չէք հաւատում, մենք էլ նոյն-  
պէս, չենք հաւատում:

Թիֆլիս, Բաղամային Վարչապետ պ. Ա. ք. Չե-  
տանաւորները ուղղակի գրելու են քա-  
ղաքային պատերի վրայ, ինչպէս ա-  
սում էք այդտեղ աւելի ֆլերտ կայ  
քան գործ... լաւ, ես ու իմ հոգին, վա-  
ղուց կատելիք է... չենք կարող տակել,  
կաշտուած ենք:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՈՒՄ Է

ՓՕՄ-ՊՈԼԵՑԻ

Գ Ի Ի Ղ Ա Յ Ի  
Բ Ի Ի Տ Ն Ե Ր Ը

Դերմ. բնագրից լծարգամեց  
ՍԵԿՐԵՏ ԹԱՌՆԵՆԵՆ

Դրմեկ՝ Книгоиздательство и книжный  
магазинъ „Гуттенберъ“ Г. И. Галстяну,  
Тифлисъ: 2—1



ՎԱՃԱՌՈՒՈՒՄ ԵՆ

# ՄԱՐԻԱԿ

կամպիլեցն

Շ Ք Ե Ղ Կ Ա Ջ Մ Ո Վ	
1906 թ.	5 ր.
1907 թ.	7 ր.
1908 թ.	7 ր.
1909 թ.	7 ր.
1910 թ.	7 ր.

Հին համարները հատով թիֆլիսում 10 կող., թիֆլիսից դուրս 12 կ.: Գրմել՝ «Սաթարալա»-ի գրասենեակին:

Բ Ժ Ի Շ Կ

## Ե. Ի. Միևսեսուց

Ներքին և երեխայոց և ստամոքս-աղիքային հիւանդութիւններին, պրոֆ. MATHIEU-ի մասնագիտական կլինիկայից Պարիզում: Ընդունելութիւնը առ. 9—11 ժ. երեկ. 5—7 ժ.: Ելիզաւետինսկայա, 39: 100—57

Բ Ժ Ի Շ Կ

## ՓԱՆՈ ՄԱՆԴԵՆԱՆ

Մասնագիտութիւն՝ ՄԻՉԱՍԵՌԱԿԱՆ, ՎԵՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւններ:

Ընդունում է հիւանդներ իր սեփական ամեն օր առաւ. 9—12 և երեկ. 6—9. Ելիզաւետինսկայա փող. № 28. 00—58

Բ Ժ Ի Շ Կ

## Արտաշես Շիւսանի

վերագառնայով արտասահմանից վերսկսեց հիւանդներին ընդունելութիւնը իր **ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ**, Գանովսկայա փողոց № 15. 50—47

Բացում է բաժանորդագրութիւն 1911 թ.

## „ԼՈՒԱՐԵՐ-ԱՐԵՒ“

ԱՉԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԹԵՐԹԻ, որը լոյս է տեսնում Երեւոսքի հիգիւսքի և օտար օրեր ԲԱԺՆԵՔԻՆՆ Է Եգիպտոսի համար տարեկան 80 դրուշ վեց ամիսը 40 շրշ Արտասահմանի համար տարեկան 15 ֆրանկ, վեցամիսը 7,50 ֆրանկ: Հասցէն՝ Administration du journal armenien, Loussaper-Arev, B. P. 868, le Caire (Egypte): 5—2

«Մամուլի տակ է եւ շատով լոյս կը տեսնուի»

# „ԿՌԱՆ“


Երգիծարանական ժողովածուն բաղկացած 300-ից աւելի մեծագիր էջերից: Գինն է մինչև լոյս տեսնելը 80 կ. Լոյս տեսնելուց յետոյ զգալի կերպով կը բարձրանայ: Իրմել՝ Эривань, Мушегу Баградуни. 10—2

ՄԻԼԻՏԻՏԻՍԿԻ ՓՈՂՈՅ № 15

Տ Ո Ւ Ն Շ Ա Հ Ո Ւ Մ Ե Ա Ն Ի

Բացում է

## Տ Ղ Ա Մ Ա Ր Գ Կ Ա Ն Յ



### ԳԵՐՉԱԿՆԵՐԻ

Ա Ր Հ Ե Մ Տ Ա Ն Ո Յ

Որտեղ ընդունում են ամեն տեսակ ատուէրներ և կատարում են ամենայն ճշտութեամբ

## ԳՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ

10—8

Открыта подписка на 1911 годъ

НА ДВУХНЕДЕЛЬНЫЙ ЖУРНАЛЪ

# Промышленность и Торговля

органъ совѣта съѣздовъ представителей промышленности и торговли, выходящій 1-го и 15-го чисель каждаго мѣсяца.

Подписная цѣна: на годъ 12 р., на полгода—7 р., съ пересылкой и доставкой.

Адресъ: С.-Петербургъ, Невскій, 100. 10—2

Բ Ա Ց Ի Ա Մ Է Բ Ա Ժ Ա Լ Ո Ր Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն 1911 թ.

# „ԳԱՐԻՆ“

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ Ի

որ լոյս է տեսնելու թիֆլիսում ներկայ փետրարի 13-ից:

№ 1-ի ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆԸ

1. Մեր շաւիղը—Գ. Տէր-Ղանդեանի.
2. Տղամարդացող կինը—Կլարա Նօլ-գէի.
3. Ծիծեռնակի երգը—Blaksmith-ի.
4. Բարեկամական խորհուրդ—Գէորդ Ջէֆօնի.
5. Տարակո-Սարակո (վէպիկ գրպանահատներին կեանքից) Գ. Տէր-Ղանդեան.
6. Մեխեր. I—Գէօ-Ղէօի.
7. Փղոս-Նատոյի.

«ԳԱՐԻՆԸ» արժէ թիֆլիսում տարեկան 2 ր., 6 ամիսը 1 ր.: 20 կող., 3 ամիսը 60 կող.: թիֆլիսից դուրս, տարեկան 3 ր., 6 ամիսը 1 ր. 75 կ., 3 ամիսը 1 ր.: «Սմարագրութիւնն աւ գրասենեակը գտնուում են. Կիսկի, Михайловскій пр.—Վօրօնցոյի արձանի մօտ և բաց են 6—8 ժամը երեկոյեան. Սմարագիր-հրատարակիչ՝ Գ. Տէր-Ղանդեանի 0—1



—*Մեզ ասում են, մեղադրում են, որ «Ազատ սիրոյ լիզային» ենք մասնակցում. եւ մեղադրողնե-  
րը ո՛վքեր են... նրանք՝ որոնք օրինակ ու պատճառ են մեր դրութեան.  
Անօրէններ, ձեզանից որը չի դրդել մեզ ցոյ կեանքի հետեւում.*